

## ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՏԱՃԿԱՀԱՅՈՑ  
ԱԶՍՈՒԹԵԱՆ

Սառըեւ առաջ բերւող երկու թուղթը գրւած է 1890 թւին, Հ. Յ. Դաշնակցութեան հմագրութեան տարին։ Առաջինի հեղինակներն են՝ Ա. Թ. — Աղեքսանտր Թարխանեան, հետադային «Թատրոն» հանդէսի խմբագիր, «ր սպանւեց յեղափոխականների ձեռքով», եւ Ս. Հ. — Սիմոն Հալումեան, հետադային պահպանողական հանրային գործիչ եւ հրապարակագիր։ 90ական թւականներին աշխատում էր մօտենալ յեղափոխական շրջաններին, յատկապէս Հ. Յ. Դաշնակցութեան։ Յայտարարութիւնը կրնքւած է կոր կնիքով։

Երկրորդ թղթի հեղինակն է Յ. Յ. Զագրեան ութսունական թւականների վերջերին եւ 90ական թւականների սկզբներին բաւական ծանօթ մի դէմք, խորհրդագրաւոր ու մի քիչ արկածունդիթիրի տպաւորութիւն թողնող, որ գանւել է Խրիմեանի շրջապատում, մասնակցել է Պոլսի զաղտնի խմբակներին, զրադւել է Կիլիկիայի խոդիրներով, ձամբրորդել է Կովկաս, արտասահման եւ այլ տեղեր։ Նրա մասին, ի միջի այլոց, խօսում է եւ Ռ. Խան Աղասու իր յուշերում («Հայրենիք» ամսագիր)։ Զագրեանն է, որ «Տաճկահայոց Ազատութեան Վարչութեան» յայտարարութիւնը ուղարկել է

Բալկաններ՝ կցելով ներկայ նամակը։ Յանկալի է, որ ծանօթ մարդիկ լուսաբանեն Զագրեանի դէմքն ու դերը, ինչպէս նաև «Վարչութիւն Տաճկահայոց Ազատութեան» կազմակերպութեան բնոյթը։ ԽՄԲ։

Ա.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առանց գոհի չկայ ազատութիւն։

Եղբայրնե՞ր, մեր հարազատ եղբայրները իրենց հայրենի հողի վրա սարուկ են եւ մատնած տանիշանքների։ Հայ կնոջ աւանդական սրբութիւնը, հայ օրիորդի կուսութիւնը մատնած են բարբարոսների կրքերին։ Դրանց փրկելու համար գոհեր են հարկաւոր, եւ այդ գոհերը պէտք է լինենի մենք, այն հայերս, որոնք մեր ննջաւած եղբայրներից աւելի ազատ կեանի ենք վարում։ Եթէ մենք ընդունակ չենք մեր կեանքը գոհել, մենք կը լինենք ամենաստորին եւ անզօնի մարդիկ, եթէ չգոհենք մեր բոլոր ունեցածը այն մարդկանց, որոնք իրենց կեանքը դնում են մեր հայրենիքի փրկութեան համար։

Տանկահայաստանի հայ ժողովուրդը ձանձրացել է արդէն իր սարսափելի դրութիւնից եւ ուզում է կամ ջնջւել բոլորովին կամ ապրել մարդակայել ազատ

կեանքով . ամբողջ ժողովուրդը պատրաստ է պահպանել իր կրաւունիքը եւ օգնութիւն է սպասում մեզանից՝ իր եղբայրներից . ո՞վ մեզանից ներկայ դեպքում առանց մտածելու եւ ուշացնելու չօգնի մեր եղբայրներին , կը նըշանակէ որ նա ընդունակ է ծախելու իր ազատուրիւնը , իր մայրը , իր որդին , իր աղջիկը և ամէն ինչ որ սուրբ է նրա համար :

Հայե՛ր , մի բոպէ ձեզ դրէք Տաճկահայոց եղբայրների տեղ և իմացէք թէ ի՞նչ պէտք է անել նրանց համար :

«Տաճկահայոց Ազատուրեան Վարչութիւնը» միջնորդ է ձեր եւ մեր ննշւած եղբայրների մէջ : Տնէք Զեր լումաները , որ Վարչութիւնը հասցնի այս լումաներից գոյացած գանձը ննշւած եղբայրներին , զէնիք տայ նրանց , եաց տայ եւ պահպանէ այն հեռուսներին , որոնք իրենց արիւնով պէտք է ողողեն հայրենի հողը :

Ի դիմաց Վարչուրեան  
Ստորագրութիւնք Ս. Հ. . . .  
Ա. Ա. . . .

1890 կնիք Վարչուրեան  
Տաճկահայոց Ազատուրեան

Բ.

ԿՅԻՔ

Յ. Զագրեան .  
Մակագրութեամբ

Հայրենասէր Եղբարք  
ի Ռումանիա եւ Պուլղարիա .

Հայաստանի եւ Կիլիկիոյ ժողովրդոց դրութիւնը եւ նոցս պատույն , ընտանեաց եւ մանաւանդ գոյութեան վրա սպասնացող վտանգը ստիպած են զիրենք

ստրկական հնագանդուրեան մի ուրիշ կերպ վարւիլ , քուրք լիրք վարչուրեան լրբենի արարքներէն ազատւելու համար , որ վերջին ժամանակներս ծայրայեղուրեանց հասած են :

Արդէն արիւնը կը մխայ Տաճկահայաստանի ամէն կողմ : Այս իրողուրեան մասին խօսիլն իսկ աւելորդ է . միայն եւ միայն այդ տառապելոց օգնութիւն է հարկաւոր , նոցա ամենակարեւոր պիտոյքը հոգալու համար : Ցարդ եղած մասնաւոր նիգերն բաւարար չէր կրնար լինել ընդհանուր գործին , այլ հարկաւոր էր մի դրամական զօրեղ եւ միանգամայն վստահելի կեդրոն գտնել , որ իւր դրիւտ ու վարքով յարմարագոյնը լինի :

Ահա ուրախուրեամբ կաւետեմ թէ այդ կեդրոնը կազմակերպած է եւ իւր բաժինը ունի ի Տփխիս Կովկասիոյ մայր քաղաքին մէջ , որոյ գործադիր մարմինը «Վարչուրիւն Տաճկահայոց Ազատուրեան» անւամբ Զեզ եւ Զեգմոնլ Զեր բարեկամաց կը դիմէ իրրեւ նշմարիտ ազգասէրներ , որպէսզի բարեհանիք դրամական ոյժերով զօրացնել զինքը , սկսած դժւար եւ ծանր գործը գլուխ հանելու համար : Զեր յարգելի եղբայրներէն պ.պ. Ոստանիկեան եւ Պոյանեան արդէն բացատրած կը լինին , ուստի եւ արդիւնքը ցանկալի է տեսնել ընդ փոյք դրկելով երկու բնիդանուր գործակալաց , զի ժամանակը ստիպողական է և թանգագին :

Մշակ եւ ծառայ Հայրենիքի Ազատուրեան

Յ. Յ. Զ. ԶԱԳՐԵԱՆ

15 նոյեմբեր , 1890 , Տփխիս .

### ՄԻ ԴԻՄՈՒՄ ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ

Այս դիմումը եղել է արտասահմանի հայ հարուստներին 1905թ. վերջերը, հայ-քրքական ընդհարությունների ամենաառուր շրջանին։ Հայ-քրքական կոլինները ստացել էին կազմակերպւած պատերազմի կերպարանի՝ գրաւելով Անդրկովկասի գրեթե բոլոր այն վայրերը, ուր հայերն ու քուրքերը ապրում էին միասին։ Կովկասահայ ժողովուրդը ծանր տագնապի մէջ էր։ Հաւաքւող նիւթական միջոցները չէին բաւականանում ռազմական ուժերի ու ռազմամթերքի կարիքները հոգալու համար։ Պիտի եղաւ դիմել եւ արտասահմանի ունետքներին։ Դիմումնագիրը կազմել ու ստորագրել են կովկասի հայ քուրժուա եւ մտաւորական տարբեր խաւերի պատկանող հեղինակակատը անձեր։ Ի՞նչ եղաւ արդիւնքը — մեզ որաշ յայտնի չէ։ Եթէ չենք սխալում, դիմումներ եղան միայն Փարիզում եւ Բերլինում՝ առաջին վայրում անհնան արդիւնքով, իսկ Բերլինում առանց սրեւ յաջողութեան։ ԽՄԲ.

\* \* \*

**Անդրկովկասի ամբողջ հայութիւնը այսօր ապրում է պատմական մի արիւնոտ ճգնաժամ, որով նրա գոյութեան, նրա լինել-չլինելու հրամայող ու անողոք խնդիրն է դրած։ Բոլոր այն խաւարութերը, որ պատմական ճակատագիրը հայութեան հարեւան է տեղեւ և որոնց համար հանդուրժելի չէ հայի, իբր առանձին կուլտուրական ցեղի, իբր քաղաքակրթական հզօր Փակտորի լինքնուրոյն գոյութիւնը, այսօր բռնութեան, աւերածի ու արիւնի գրօշակի տակ համախմբւած, մի դիւական դաշնակցութեամբ ուխտել են բնաջինջ անել հայ աղջը։**

Տասն երկար ամիսների կազմակերպւած ջարդերը հայ քաղաքներում ու գաւառներում բաւական եղան այդ հրէշաւոր գաւադրութիւնը մերկացնելու եւ հայ ցեղին սպառնացող վտանգի մեծութիւնը պարզելու։

Երկրայութիւնից գուրս է, որ մեր կողմից « անխորհուրդ » համարւած այս կոկուը մեր թշնամիների, թուրքերի եւ նրանց հզօրապէս օժանդակող բոլոր հակառակորդ տարբերի համար ունի իր տմարդի ու ոճիրներով հարուստ խորհուրդը — հայ ազգի իսպառ ջնջումը։ Այսպիսով հասկանալի է դատնում, թէ ինչո՞ւ հայ ժողովրդի բոլոր դասերի ծայրայենների թէ չափաւորների խաղաղասիրական անկեղծ ջանքերը թուրքերի կողմից միշտ հանդիպեցին խարդաւանքների, դասերի եւ նոր տմարդի ջարդերի։

Իրերի այս կացութեան մէջ ուրիշ ելք չէր մնում, բայց եթէ զինւել ու սպառապանւել։ Եւ սպառնացող վտանգի բոլոր ահաւոր իմաստը գիտակցելով՝ հայ ժողովուրդը Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեամբ ահա տասն ամիս է, որ մզում է անհաւասար ու անողորմ կոխի՝ գոյութիւնը ու պատիւը պաշտպանելու համար։ Սակայն, հայ մարտական ուժերը ներկայ ծանր պահանջներին համա-

պատասխան կերպով զինելու համար բաւական չեն Կովկասում ապրող հայ ունեւորների, հայ գիւղացիութեան միջոցները։ Մասնաւորապէս հայ ունեւորը՝ պարբերաբար ջարդերով մեծամեծ նիւթական վնասներ կրած եւ անձն էլ վտանգի մէջ, Հ. Յ. Դաշնակցութեան միջոցով մեծ զոհաբերութիւններ է յանձն առել եւ դեռ շարունակում է տալ իր վերջին կոպէկները։ Բայց զա մի կաթիլ է պահանջի մեծութեան առաջ։ Զէ՞նք, զէ՞նք, այլապէս հայ ցեղի գէմ կազմւած հրէշաւոր դաւաղլութիւնը կարող է իւր վախճանական նպատակին հասնել։

Այս պատճառով մենք՝ ըմբոնելով ներկայ մոմենտի բոլոր տրագիկական նշանակութիւնը մեր ցեղի ապագայի համար, յանուն արդարութեան ու քաղաքակրթութեան, յանուն անիրաւ տեղը տառապող մեր ժողովրդի, յանուն այն բոլորի, ինչի վերահաստատած է ամէն ժողովրդի անբոնաբարելի իրաւունքն աշխարհում — դիմում ենք ձեզ, արտասահմանի ապահովութիւն վայելող հայութեան ունեւոր մասին, որ չուտափոյթ օգնութեան հասնէք աղդային այս հսկայական աղէտի առաջն առնելու համար։

Իրաքանչիւր վայրկեանը թանգ է, եւ ուշանալը կամ թերանալը այս նւիրական պարտքի մէջ հաւասար է մեծագոյն յանցանքի։

Հայ ցեղի գոյութիւնը վտանգի մէջ է. օգնեցէ՞ք հզօրապէս եւ արագ։

Այս բոլորը վկայում ենք եւ մեր սոսորագրութեամբ հաստատում — Ա. Մելիք-Ազարեան, Գասպար Տէր-Մարգարեան, Եփրեմ Ծատուրեան, Յ. Խունունց, Տիգրան Ափրիկեանց, Յ. Շատինեան, Բ. Եղիազարեան, Ալ. Խատիսեան, Սամ. Յարութիւնեանց, բժ. Կ. Ստեփանեան։

(Կենտր. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան)

